



ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
YEREVAN STATE UNIVERSITY

---

СТУДЕНЧЕСКОЕ НАУЧНОЕ ОБЩЕСТВО  
STUDENT SCIENTIFIC SOCIETY

ISSN 1829-4367

## **СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ СНО ЕГУ**

### **COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES OF YSU SSS**

#### **1.4 (30)**

##### **Общественные и гуманитарные науки**

(Богословие, востоковедение, литературоведение, правоведение, журналистика, языкознание, педагогика, история, социология, экономика и управление, философия и психология, политология и международные отношения)

##### **Humanities and Social Sciences**

(Theology, Oriental Studies, Literary Studies, Jurisprudence, Journalism, Linguistics, Pedagogy, History, Sociology, Economics and Management, Philosophy and Psychology, Political Science and International Relations)

ЕРЕВАН - YEREVAN  
ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ - YSU PRESS  
2019

## ԵՊՀ ՌԻԳԸ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

### 1.4 (30)

#### **Հասարակական և հումանիտար գիտություններ**

(Աստվածաբանություն, արևելագիտություն, գրականագիտություն, ժուռնալիստիկա, իրավագիտություն, լեզվաբանություն, մանկավարժություն, պատմություն, սոցիոլոգիա, տնտեսագիտություն և կառավարում, փիլիսոփայություն և հոգեբանություն, քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ)

**Հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ**  
**Издаётся по решению Ученого совета ЕГУ**  
**Published by the Resolution of the Academic Council of YSU**

**Խմբագրական խորհուրդ՝**

բ.գ.դ., պրոֆ. Դ. Պետրոսյան  
բ.գ.դ., պրոֆ. Լ. Մաթևոսյան  
բ.գ.դ., պրոֆ. Յու. Ավետիսյան  
բ.գ.դ., պրոֆ. Ս. Մուրադյան  
բ.գ.դ., պրոֆ. Վ. Հարությունյան  
հ.գ.դ., պրոֆ. Հ. Ավանեսյան  
պ.գ.դ., պրոֆ. Ս. Մկրտչյան  
տ.գ.դ., պրոֆ. Հ. Մնացականյան  
տ.գ.դ., պրոֆ. Հ. Սարգսյան  
ք.գ.դ., պրոֆ. Գ. Քեռյան  
բ.գ.դ., դոց. Շ. Պարոնյան  
բ.գ.թ., դոց. Ն. Վարդանյան  
բ.գ.թ., դոց. Վ. Եղիազարյան  
տ.գ.թ., դոց. Կ. Խաչատրյան  
բ.գ.թ., ասիստ. Ն. Պողոսյան  
ի.գ.թ., ասիստ. Վ. Գրիգորյան  
ի.գ.թ., ասիստ. Տ. Սուջյան  
ի.գ.թ., ասիստ. Ա. Թավադյան  
հ.գ.թ., ասիստ. Դ. Սարգսյան  
պ.գ.թ., ասիստ. Ռ. Կարապետյան  
փ.գ.թ., ասիստ. Կ. Յարալյան

**Редакционная коллегия:**

д.ф.н., проф. Д. Петросян  
д.ф.н., проф. Л. Матевосян  
д.ф.н., проф. Ю. Аветисян  
д.ф.н., проф. А. Мурадян  
д.ф.н., проф. В. Арутюнян  
д.п.н., проф. Г. Аванесян  
д.и.н., проф. С. Мкртчян  
д.э.н., проф. А. Мнацаканян  
д.э.н., проф. А. Саргсян  
д.п.н., проф. Г. Керян  
д.ф.н., доц. Ш. Паронян  
к.ф.н., доц. Н. Варданын  
к.ф.н., доц. В. Егиазарян  
к.э.н., доц. К. Хачатрян  
к.ф.н., ассист. Н. Погосян  
к.ю.н., ассист. В. Григорян  
к.ю.н., ассист. Т. Суджян  
к.ю.н., ассист. А. Тавадьян  
к.п.н., ассист. Д. Саргсян  
к.и.н., ассист. Р. Карапетын  
к.ф.н., ассист. К. Яралян

**Editorial Board**

DSc, Prof. D. Petrosyan  
DSc, Prof. L. Matevosyan  
DSc, Prof. Y. Avetisyan  
DSc, Prof. S. Muradyan  
DSc, Prof. V. Harutyunyan  
DSc, Prof. H. Avanesyan  
DSc, Prof. S. Mkrtchyan  
DSc, Prof. H. Mnatsakanyan  
DSc, Prof. H. Sargsyan  
DSc, Prof. T. Keryan  
DSc, Associate Prof. Sh. Paronyan  
DSc, Associate Prof. N. Vardanyan  
DSc, Associate Prof. V. Yeghiazaryan  
PhD, Associate Prof. K. Khachatryan  
PhD, Assistant Prof. N. Poghosyan  
PhD, Assistant Prof. V. Grigoryan  
PhD, Assistant Prof. T. Sujyan  
PhD, Assistant Prof. A. Tavadyan  
PhD, Assistant Prof. D. Sargsyan  
PhD, Assistant Prof. R. Karapetyan  
PhD, Assistant Prof. K. Yarlyan

Հրատարակիչ՝ ԵՊՀ հրատարակչություն  
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ալ. Մանուկյան 1, (+374 10) 55 55 70, publishing@ysu.am

**ԼՐԱԳՐՈՂԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՌԱՋՆԱԳԾՈՒՄ**

Հնագույն ժամանակներից մեզ հասել են մի շարք մատենագրություններ, որոնցում նկարագրված են աշխարհի տարբեր ծայրերում պատերազմող տերությունների և կայսրությունների ռազմական գործողությունները և մարտավարությունները: Այս ամենը փաստում է, որ ռազմական լրագրության ակունքները նշմարվում են դեռևս համաշխարհային պատմության վաղ շրջափուլերից: Եթե առաջնորդվենք այս տեսակետով, ապա ընդհանուր հատկանիշները հաշվի առնելով՝ կարող ենք նկատել, որ ռազմագործողություններ լուսաբանող առաջին լրագրողները եղել են հենց այդ աշխատությունների հեղինակները՝ պատմագիրները: Սակայն կա էական տարբերություն ևս. հնագույն ժամանակներում պատմիչների նպատակը եղել է իշխանության ներկայացուցիչների համար արձանագրությունների կազմումը, մինչդեռ ժամանակակից աշխարհում ռազմական լրագրողի հիմնական առաքելությունը հանրությանը պատերազմական թեժ կետերից տեղեկատվության հաղորդումն է:

Տպագրության գյուտը և մարդկության գրագիտության մակարդակի բարձրացումը նպաստեցին ռազմական տեղեկատվության հասանելիությանը: Սակայն օպերատիվության խնդիրը շարունակում էր մնալ օրհասական. չէ՞ որ պետությունների զորքերը պատերազմում էին հայրենիքից հեռու, և երկար ժամանակ էր պահանջվում ռազմաճակատից լուրերը տեղ հասցնելու համար:

Առաջին ռազմական լրագրողներից կարող ենք նշել բրիտանական «Թայմս» թերթի թղթակից Հենրի Ռոբինսոնին [1], ում խմբագրությունը 1807 թվականին գործուղել էր Իսպանիա: Նպատակը մեկն էր՝ ընթերցողին ականատեսի աչքերով ներկայացնել ֆրանսիական և իսպանական զորքերի միջև ընթացող պատերազմը, քանի որ այդ ժամանակաշրջանում հասարակությունը տարված էր նապոլեոնական պատերազմներով:

Հեռագրի և լուսանկարչական ապարատի ստեղծումը նպաստեցին, որ մարտադաշտից հնարավորինս արագ և արդյունավետ հաղորդվեն տեղեկությունները: Առաջին համաշխարհամարտի տարիներին «Րեյ» և «Ուտրո Ռոսսիի» [1] թերթերում տեղ գտած հոդվածներն ուսումնասիրելիս տեսնում ենք, որ ռազմական լրագրողների աշխատանքը համակարգելու փորձ է կատարվել: Բացի այդ, այս շրջանի մամուլում տեսնում ենք նաև քարոզչության և «թշնամու կերպարի» ստեղծման առաջին լուրջ փորձերը:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ռազմական լրագրությունն էական փոփոխություններ ունեցավ: Սկսեցին հրատարակվել մեծ թվով նոր

թերթեր և ամսագրեր, որոնց հիմնական նպատակը շարունակում էր մնալ քարոզչությունը: Այդ ժամանակ ռազմական գործողությունները լուսաբանող լրագրողը, ով զորքի կողքին էր և ամեն պահ աշխատում էր կյանքը վտանգելով, գրեթե չէր տարբերվում սովորական լրագրողից թե՛ մասնագիտական գիտելիքների, թե՛ կարգավիճակի տեսանկյունից:

Հայաստանում ռազմական լրագրության տարրեր տեսնում ենք 1990-ականներին: Արցախյան պատերազմի տարիներին առաջնագիծ մեկնել են հարյուրավոր կամավորներ, նրանց շարքում՝ նաև լրագրողներ, գրողներ, լուսանկարիչներ, ռեժիսորներ և օպերատորներ: Ականատեսները վկայում են, որ նրանցից շատերը համատեղում էին պատերազմի վավերագրությունը և զինվորականի աշխատանքը: Նրանք եղել են պատերազմի թեժ կետերում, շփվել են խաղաղ բնակչության, զինվորականների հետ, ականատես են եղել ռազմական բարդ գործողություններին:

Նրանց շնորհիվ այսօր հասանելի են Արցախյան պատերազմի մի շարք կադրեր, լուսանկարներ և ձայնագրություններ մարտական գործողություններից, ջոկատներից և զինվորականներից: Բայց միևնույն պահին չափազանց սակավաթիվ են պատերազմը վավերագրողների, նրանց մասնագիտական գործունեության խոչընդոտների և դժվարությունների, տեխնիկական հնարավորությունների մասին մեզ հայտնի տեղեկությունները: Գիտական հոդվածը պատրաստելիս՝ արձանագրեցինք, որ 2017 թվականի մայիսին լույս է տեսել «Նրանք նկարում էին պատերազմը» գիրքը, որում տեղ են գտել 34 հարցազրույց նրանց հետ, ովքեր 1991-94 թթ. եղել են ռազմաճակատում և նկարել են պատերազմը (նշենք նաև, որ գրքի հիմքում «Կինոաշխարհ» կայքում [4] հրապարակված «Պատերազմի վավերագրողները» շարքի հարցազրույցներն են):

Ազատամարտի տարիներին աշխատող լրագրողները թույլատրելիի ու անթույլատրելիի սահմանն իրենք էին գծում: Մասնագիտական ուղեցույցի դեր կատարող խիղճն էր հուշում՝ որ իրավիճակում ինչ անել և ինչ չանել: Լրագրողի կերպարանափոխման իրավունքի մասին տեսականորեն չգիտեին, բայց անհրաժեշտության դեպքում դիմում էին այդ հնարքին՝ ականայից իրագործելով իրենց վերապահված իրավունքը [3]:

Պատերազմական գործողությունների ժամանակ հատկապես կարևորվում է տեղեկատվության ազատությունը և կապի ապահովումը: Ուստի դա է պատճառը, որ հակառակորդի թիրախում հայտնվում են նաև հեռուստա կամ ռադիոկայանները: Նախադեպ եղել է նաև Արցախում: Արցախի հեռուստատեսությունը ստեղծվել է 1988 թվականին: Անդրանիկ ծրագիրը եթեր է հեռարձակվել հունիսի 1-ին: Այդ օրն էլ համարվում է Արցախի հեռուստատեսության ծննդյան օրը: Լրագրող, հրապարակախոս Վարդգես Բաղրյանը Արցախի հեռուստատեսության հիմնադիրներից է: Նա և մյուս ականատեսները պատմում են, թե ինչպես է 1992 թ. փետրվարին Շուշիից իրականացված հրթիռահրետանակոծության հետևանքով հեռուստակենտրոնի շենքը լիովին ավերվել: Ռումբի բեկորն ընկել է ձայնադարան: Տեսաժապավենները դյուրա-

վառ են եղել, անմիջապես բռնկվել են: Աշխատակիցները, որոնց թվում էր նաև Վարդգես Բաղդյանը կրակի գոտուց, հասցրել են հանել միայն տեխնիկան: Ըստ նրա՝ չորս տարվա արխիվը գրեթե ամբողջությամբ այրվել է: Պահպանվել է միայն այն, ինչը կրկնօրինակել էին՝ պահելով տներում:

Թվենք Արցախյան պատերազմը վավերագրողներից ևս մի քանիսի անունները [4]՝

- Նորել Գասպարյան. Արցախի Հեռուստառադիոընկերության խորհրդի նախագահն է: Հեռուստատեսությունում սկսել է աշխատել 1988-ից, պատերազմի ժամանակ եղել է գրեթե բոլոր թեժ կետերում:

- Բենադրոզ օպերատոր Տաճատ Եսայանն իր գործընկերների՝ Ռուբեն Խաչատրյանի, Տիգրան Գևորգյանի հետ 1987-ին հեռուստալրատվության դաշտ է տեղափոխվել կինոյի ոլորտից: Կինոխցիկին փոխարինեցին տեսախցիկները: Նրանք դարձան Հանրային հեռուստատեսության «Լրաբեր» ծրագրի օպերատորներ: Տաճատ Եսայանի արցախյան պատմություններում հիշարժան տարեթվեր, դեպքեր ու դեմքեր կան, որոնք երեք տասնամյակ անց ամրագրվում են որպես փաստեր ու վկայություններ:

- Բենիամին Ղարախանյանն ստեղծման օրից աշխատում է Արցախի հանրային հեռուստատեսությունում, ԼՂՀ վաստակավոր հեռուստալրագրող է, ութ հեռուստաֆիլմերի էկրանավորման համահեղինակ:

- «Հետք» էլեկտրոնային պարբերականի գլխավոր խմբագիր, լրագրող Էդիկ Բաղդասարյանն 90-ականներին որպես լրագրող մեկնել է Արցախ: Արցախում էր նաև 2016 թվականի ապրիլին:

Կարող ենք եզրակացնել, որ ինչ-որ առումով 1990-ականների Արցախյան պատերազմի տարիներին աշխատած լրագրողները համարվում են Հայաստանում ռազմական լրագրության առաջամարտիկները և սկզբնավորողները: Չեն եղել որևէ սահմանումներ, մասնագիտական սկզբունքներ, էթիկական նորմեր: Նրանք դարձել են միաժամանակ մասնագիտական պայմանների, կանոնների և՛ ստեղծողները, և՛ կիրառողները: Այս ազատությունը հեշտացնում էր վավերագրողների աշխատանքը: Պետք է փաստենք նաև, որ Հայաստանի համար բախտորոշ այդ ժամանակահատվածում իրատեսական չէր լինի մտածել մասնագիտական էթիկայի պահպանման մասին:

2016 թվականի Ապրիլյան պատերազմի ընթացքում ականատես եղանք բոլորովին այլ պատկերի: Տարիների ընթացքում զարգացում էր ապրել հայաստանյան լրատվադաշտը: Տեխնիկական զարգացմանը զուգահեռ համեմատաբար աճել էր թե՛ լրագրողների, թե՛ հասարակության մեդիագրագիտության մակարդակը: Մի շարք ՁԼՄ-ներ մշակել էին նաև էթիկայի կանոնագրեր:

Տեղեկատվական տեխնոլոգիաների հաղթարշավը և համացանցի տարածումը նպաստեցին օպերատիվ տեղեկատվության մատչելիությանը: Այս հանգամանքը համեմատաբար հեշտացրեց առաջնագծում լուսաբանումներ կատարող լրագրողների

աշխատանքը, սակայն միևնույն ժամանակ ծառայան նաև էթիկական մի շարք խնդիրներ, արձանագրվեցին ապատեղեկատվությունների մեծ հոսքեր:

Գաղտնիք չէ, որ 1994 թվականից՝ զինադադարի հաստատումից ի վեր, հրադարի ռեժիմը բազմիցս խախտվել է սահմանագծի տարբեր հատվածներում: Այս ընթացքում հետևելով հայկական լրատվամիջոցների գործունեությանը՝ կարող ենք նշել, որ ժամանակի ընթացքում թեև ռազմական գործողությունները լուսաբանելու համար ստեղծվել են առավել հարմար և բարենպաստ պայմաններ, այնուամենայնիվ, քիչ չեն նաև թերությունները և բացթողումները, որոնց հիմնական պատճառը լրագրողների ոչ հմուտ, անհետևողական և ոչ գրագետ աշխատանքն է: Դիվերսիոն ներթափանցումների, մարտական այլ գործողությունների մասին թեև ՀՀ պաշտպանության նախարարությունը և ԱՀ պաշտպանության բանակը տրամադրում են հաղորդագրություններ, այնուամենայնիվ, հաճախ ենք հանդիպում դեպքերի, երբ այս կամ այն լրատվամիջոցը ներկայացնող լրագրողները, հղում անելով «իրենց աղբյուրներին», չեն սպասում տեղեկատվության պաշտոնական հաստատմանը և շտապում են հրապարակել այն: Նման դեպքերը խուճապ են առաջացնում հանրության շրջանում, հատկապես, եթե խոսքը զոհերի կամ վիրավորների մասին է:

Բացի այդ, բախվում ենք նաև ռազմագիտական եզրույթների սխալ գործածության խնդրին, որը ևս կարող է խուճապի պատճառ դառնալ: Պատերազմական իրավիճակների լուսաբանման ժամանակ կարևոր է համապատասխան եզրերի ճիշտ գործածումը:

2016 թվականի ապրիլին տարբեր ԶԼՄ-ներից լրագրողներ և օպերատորներ մեկնեցին Արցախ: Ցանկացած լրագրող առաջնագիծ մեկնելու և հատկապես մարտական գործողություններ լուսաբանելու համար պետք է լավ նախապատրաստված լինի: Անշուշտ, առաջին հերթին խոսքը հոգեբանական նախապատրաստության մասին է: Լրագրողը պետք է սթափ գիտակցի իր և գործընկերների կյանքին սպառնացող վտանգը, հասկանա՝ ուր է գնում, ինչ խնդիր է դրված իր առջև, բայց որ ամենակարևորն է, գիտակցի, որ գործ է ունենալու մարդկային նուրբ զգացմունքների հետ (հատկապես՝ հարցազրույցների ժամանակ):

Ռազմական գործողությունների ժամանակ դեպքի վայրից ռեպորտաժներ կարող են պատրաստել միայն կենդանի լրագրողըն ու օպերատորը: Ուստի, պետք է հավուր պատշաճի ուշադրություն հատկացնել սեփական կյանքի անվտանգությանը: Ցավոք, այսօր ամբողջ աշխարհում (նաև Հայաստանում) կան լրագրողներ, ովքեր կարծում են, թե ռազմագործողությունների լուսաբանումը հերոսանալու և ճանաչում ձեռք բերելու միջոց է, և դրա համար պետք է ռիսկի դիմել՝ կյանքը վտանգելու գնով: Սակայն սա ոչ միայն հեռու է արհեստավարժ աշխատելաոճից, այլև հղի է զանազան խնդիրներով և հետևանքներով:

Քաղաքակիրթ երկրներում հակամարտություններ և պատերազմական գործողություններ լուսաբանող լրագրողը դեպքի վայրում դադարում է հակառակորդի թիրախ լինել, երբ մեջքին, ձեռքին, գլխին, կրծքավանդակին, ինչպես նաև ուսագլխին



կա «PRESS» նշանը: Լրատվական խմբին թեժ կետերում շրջապատող ցանկացած բան պետք է պատված լինի այդ նշանով՝ սկսած մեքենայից:

Նշեցինք լրագրողի հագուստի «PRESS» գրության անհրաժեշտության և կարևորության մասին, քանի որ այն ինչ-որ չափով ապահովագրություն է լրագրողի կյանքի համար: Սակայն կա մեկ այլ հանգամանք ևս. ՁԼՄ ներկայացուցիչների հագուստի գույները չպետք է նման լինեն զինվորական համազգեստին (պետք է բացառել դեղնականաչավուն, դարչնագույն և հողագույն բոլոր երանգները), քանի որ անկախ այն հանգամանքից՝ հագուստի վրա առկա է «PRESS» բառը, թե ոչ, լրագրողը խոցելի է:

Այս խնդրին բախվում ենք նաև պայմանականորեն խաղաղ իրավիճակներում: Ասվածի վառ ապացույցն առկա է հայկական իրականության մեջ: Խոսքը 2017 թվականի մայիսի 10-ին տեղի ունեցած դեպքի մասին է, երբ արցախա-ադրբեջանական շփման գծի հյուսիսային հատվածում հակառակորդը կրակ էր բացել «Շանթ» հեռուստաընկերության «Դիրքերում» հաղորդաշարի նկարահանող խմբի ուղղությամբ: ՊԲ հյուսիսային ուղղությամբ տեղակայված մարտական դիրքերի միջտարածությունում հակառակորդը կրակել էր խոշոր տրամաչափի զենքերից՝ դիպուկահար հրացաններից և գնդացիներից: Հակառակորդի արձակած կրակոցներից հրազենային վիրավորում էր ստացել «ՇԱՆԹ» հեռուստաընկերության օպերատոր Դավիթ Արայիկի Աթոյանը, ով նկարահանման նպատակով դիրքեր էր գործուղվել (Ստեփանակերտի հոսպիտալում ցուցաբերվել էր վիրաբուժական օգնություն): Այս դեպքը մի շարք քննարկումների առիթ դարձավ: Երրորդ կայազորային քննչական բաժնում հարուցվեց քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 6-րդ և 13-րդ կետերով՝ հակառակորդի կողմից ազգային և կրոնական ատելության շարժառիթով, շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով, ապօրինաբար երկու կամ ավելի անձանց դիտավորությամբ կյանքից զրկելու փորձ կատարելու դեպքի առթիվ:

Թեպետ հակառակորդի կրակոցները կարող էին ողբերգական ավարտ ունենալ նկարահանող խմբի յուրաքանչյուր անդամի համար, սակայն, եթե հարցին անդրադառնանք մասնագիտական տեսանկյունից, ապա պետք է արձանագրել՝

- նկարահանող խմբի անդամների մեքենան, որով անցնում էին մարտական դիրքերի միջտարածությամբ, չէր տարբերվում զինվորական մեքենայից: Ավելին, ոչ միայն բացակայում էր «PRESS» նշանը, այլև մեքենան ամբողջովին պատված էր զինվորական նախշերով,

- Նկարահանող խմբի անդամները եղել են զինվորական համազգեստով (որոշ տեղեկությունների համաձայն՝ նաև զինված), ինչի պատճառով հակառակորդը չէր կարող կռահել, որ մեքենայում գտնվել են ՁԼՄ ներկայացուցիչներ:

Նպատակ չունենալով այս օրինակով որևէ կերպ արդարացնել հակառակորդի գործողությունները, այնուամենայնիվ, մասնագիտական տեսանկյունից պետք է փաստենք, որ ՁԼՄ ներկայացուցիչները ոչ մի դեպքում և ոչ մի իրավիճակում իրավունք չունին նման կերպ հայտնվել հակամարտության գոտում՝ վտանգելով ոչ միայն

իրենց կյանքը, այլև պատճառ դառնալով սահմանային իրավիճակի ավելի մեծ լարվածության և փոխիրաձգության:

Հակամարտության գոտում աշխատող լրագրողների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ հիմնական փաստաթուղթը Ժնևի 1949 թ. կոնվենցիան է՝ 1977 թ. լրացում-արձանագրություններով: Ցանկալի է, որ հակամարտություններ լուսաբանող ցանկացած լրագրող դրանց հիմնարար սկզբունքներն իմանա երկու պատճառով. նախ՝ արձանագրի, ապա՝ հրապարակի խախտումները, այդ թվում՝ ռազմական հանցագործությունները: Բացի այդ, փաստաթղթի կետերի մի մասը վերաբերում է լրագրողների իրավունքներին: Համաձայն Ժնևի կոնվենցիայի՝ զինված բախումների գոտում մասնագիտական պարտքը կատարող լրագրողները պետք է դիտվեն որպես քաղաքացիականներ, եթե նրանք այս կարգավիճակին հակասող որևէ քայլ չեն կատարել: Օրինակ, եթե նրանք զինվորական համազգեստ չեն հագել կամ զենք չեն վերցրել [5]:

Առաջնագծում աշխատող լրագրողի համար կարևոր է նաև կապ պահպանել խմբագրության հետ և հնարավորինս օպերատիվորեն տեղեկացնել խմբի տեղաշարժերի մասին: Միանշանակ, առկա են նաև տեխնիկայի հետ կապված խնդիրներ, որոնցից առաջնայինը լիցքավորումն է: Վերջին շրջանում այդ բացը լրացնում են լրացուցիչ մարտկոցները, որոնք լրագրողը նախապես պետք է ձեռք բերի:

Խոսքից առավել ազդեցիկ է պատկերը: «Հետք» էլեկտոնային պարբերականը Հայաստանում այն եզակիներից է, որ 2002 թ. ընդունել է էթիկայի կանոնագիր: Սակայն 2016 թվականին «Հետքը» խախտեց էթիկական լրագրության որոշ կանոններ: Հրապարակվեց **«Վայրագություններ՝ Թալիշում (ԶԳՈՒՇԱՑՈՒՄ. Հրապարակված է գնդակահարված անձանց լուսանկար)»** վերնագրով հոդվածը: Լուսանկարում քողարկված չէր ոչ մի դետալ: Խմբագրությունը լուսանկարին կից տարածեց հետևյալ տեսակետը. *«Ներողություն ենք խնդրում ընթերցողներից. «Հետքը» նման լուսանկարներ երբեք չի հրապարակել, սա մեր էթիկայի վարքականոնի խախտում է, բայց իրականությունը ներկայացնելու այլ միջոց այս պահին չունենք»*: Ինչպես բազմիցս նշել է «Հետքի» գլխավոր խմբագիր Էդիկ Բաղդասարյանը, այդ լուսանկարների հրապարակումը խմբագրության քննարկումների և համատեղ որոշման արդյունք էր: Խմբագրության դիրքորոշումը հասկանալի է. անհրաժեշտ էր ապահովել կատարված վայրագությունը ներկայացնելու փաստական հիմք: Հետագայում իրավաբաններից և լրագրողներից կազմված խումբը հենց այս լուսանկարի շնորհիվ հադես եկավ նախաձեռնությամբ՝ դիմելով Միջազգային քրեական դատարան և Մարդու իրավունքների Եվրոպական դատարան: Այդուհանդերձ, հոդվածին ուղեկցող մեկնաբանություններում քիչ չէին կարծիքներն այն մասին, թե խմբագրությունը չպետք է հրապարակեր ոչ միայն սպանված տարեցների լուսանկարը, այլև անունազգանունները [6]:

Ապրիլյան պատերազմի ժամանակ որպես տեղեկատվական աղբյուր իր ակտիվությամբ և օպերատիվությամբ մեծ նշանակություն ուներ և առանձնապես

աչքի ընկավ ՀՀ ՊՆ մամուլի խոսնակ Արծրուն Հովհաննիսյանը (հատկապես՝ «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում): Սթափ և գրագետ տեղեկատվության տարածմանը նպաստեցին նաև մեդիափորձագետները՝ դարձյալ օգտագործելով ֆեյսբուքյան հարթակը: Նրանք օգնում էին իրենց խորհուրդներով ու հորդորներով ինչպես տեղեկատվության հետ աշխատողներին, այնպես էլ ամեն պահի սահմանից տեղեկություն սպասող քաղաքացիներին:

Բացթողումների մասին խոսելով՝ տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետները հետագայում նմանատիպ իրավիճակներից խուսափելու համար առաջարկեցին փոխել պետական գերատեսչությունների կողմից տրամադրվող տեղեկատվության ձևաչափը՝ մամուլի հաղորդագրություններից անցնելով ճեպագրույցների: Այս և մարտական գործողությունների ժամանակ առաջնագծում աշխատող լրագրողների աշխատանքը համակարգելու և հնարավորինս հարմարավետ պայմաններ ստեղծելու նպատակով 2017 թվականի հոկտեմբերի 24-ին տեղի ունեցավ ԱՀ պաշտպանության բանակի տեխնիկական ժամանակակից սարքավորումներով վերազինված տեղեկատվական կենտրոնի բացումը: Արցախի պաշտպանության բանակի տեղեկատվական կենտրոնը գործելու է ՊԲ մամուլի ծառայության ներքո, որին ճգնաժամային իրավիճակներում աջակցելու են պետական բոլոր մարմինների մամուլի ծառայությունները: Նախկինում Արցախում նման կենտրոն չի եղել: Լրագրողների աշխատանքը ստիպված ոչ համակարգված ձևով կազմակերպվել են հասարակական տարբեր օբյեկտներում:

Տեղեկատվական ժամանակակից կենտրոն ունենալու անհրաժեշտությունն առաջացել է հատկապես 2016 թվականի ապրիլյան գործողություններից հետո:

Ժնևի կոնվենցիան սահմանում է մարտական գործողությունների ժամանակ լրագրողների տեղաշարժը առաջնագծում: Հայաստանում պատերազմի ժամանակ լրագրողների աշխատանքը կարգավորվում է պաշտպանության բանակի հրամանատարի հրամանով: Նշենք նաև, որ Հայաստանի զանգվածային լրատվության միջոցների դիտորդ մարմինը մշակել է «Պատերազմի, զինված բախումների և ներքին հակամարտությունների ժամանակ լրագրողների ու լրատվամիջոցների վարքի» ուղեցույցը:

ՄԱԿ անվտանգության խորհուրդը ևս պարբերաբար իր մտահոգությունն է հայտնում լրագրողների ազատության և անվտանգության առնչությամբ: Անվտանգության խորհրդի վերջին փաստաթուղթը, որն ընդունվել է 2015 թվականին, պետություններին կոչ է անում քայլեր ձեռնարկել՝ պաշտպանելու լրագրողներին՝ մարտական գործողությունների ժամանակ չթիրախավորելու, իսկ գերի վերցնելու դեպքում՝ քաղաքացիական անձի պես վարվելու համար:

Լրագրողների անվտանգության հարցերով զբաղվում է նաև Կարմիր խաչի միջազգային կազմակերպությունը: Մասնավորապես՝ սկսած 1985 թվականից, կազմակերպությունում գործում է թեժ գիծը (այժմ նաև առցանց տարբերակով ICRC.org կայքում) այն լրագրողների համար, ովքեր հայտնվել են անելանելի իրավիճակում:

ԿԻՄԿ-ն բացառապես մարդասիրական օգնություն է ցուցաբերում: Ոչ միայն լրագրողները, այլև նրանց գործատուները կամ հարազատները կարող են դիմել կազմակերպությանը և խնդրել աջակցություն: Նման իրավիճակներում ԿԻՄԿ-ն կարող է տարատեսակ աջակցություն ցուցաբերել՝ տեղեկություն ստանալ լրագրողի հավանական ձերբակալության մասին, տեղեկություն տրամադրել լրագրողի գտնվելու վայրի մասին, իրականացնել որոնողական ակտիվ աշխատանք կամ էլ առաջին օգնություն ցուցաբերել վիրավորված լրագրողներին [5]:

Այսպիսով, առաջնագծում աշխատող լրագրողները պետք է կարողանան արհեստավարժ աշխատանքի միջոցով տեղեկատվություն փոխանցել ոչ միայն իրենց երկրի քաղաքացիներին, այլև միջազգային հանրությանը՝ տեղեկատվական պատերազմներում ամրապնդելով առաջատարի դիրքերը:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- [1] Foreign Correspondence: The Great Reporters and Their Times, John Hohenberg, 1995, p. 4.
- [2] **Эйдук Д. В.**, Война и печать: к истории военного репортажа в русской газетной периодике, 1914-1915 гг.
- [3] «Ազատամարտը վավերագրող Բենոն», URL: [www.hayzinvor.am/48592.html](http://www.hayzinvor.am/48592.html) (հղումը կատարվել է՝ 28.06.2018):
- [4] URL: [www.kinoashkharh.am](http://www.kinoashkharh.am) (հղումը կատարվել է՝ 14.09.2018):
- [5] URL: [www.mil.am/media/2016/07/11192.pdf](http://www.mil.am/media/2016/07/11192.pdf) (հղումը կատարվել է՝ 19.02.2018):
- [6] **Պետրոսյան Վ. Գ.**, «Էթիկական մարտահրավերները Ապրիլյան քառօրյա պատերազմի օրերին», ԵՊՀ, Իջևանի մասնաճյուղ, «Ակունք», 2017:

Մկրտչյան Միլենա

## ԼՐԱԳՐՈՂԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՌԱՋՆԱԳԾՈՒՄ

**Բանալի բառեր՝** ռազմական լրագրություն, լուսաբանում առաջնագծից, ռազմաճակատ, պատերազմ, անվտանգություն, ազատամարտ, հակամարտություն, էթիկա, Արցախ, մամուլ, բանակ:

Գիտական հոդվածի թեմայի ընտրությունը պայմանավորված է հայկական ՉԼՄ-ների առջև ծառայած մարտահրավերներով: Ադրբեջանական ապատեղեկատվական քարոզչամեթոդային դիմագրավելու համար հայ լրագրողները պետք է առավել արհեստավարժ լուսաբանեն սահմանագծում տիրող իրավիճակը՝ հայկական և միջազգային լսարանին հաղորդելով օբյեկտիվ տեղեկատվություն:

Ներկայացված է ռազմական լրագրության սկզբնավորման և զարգացման ուղին: Անդրադարձել ենք պատերազմների ժամանակ առաջնագծից լուսաբանում կատարող

լրագրողների աշխատանքների առանձնահատկություններին: Դիտարկվում են ռազմական լրագրության միջազգային այն սկզբունքները, որոնք պետք է կիրառվեն հայկական մեդիադաշտում՝ ռազմական ոլորտի գրագետ լուսաբանումը կազմակերպելու համար:

Мкртчян Милена

### **ОСОБЕННОСТИ РАБОТЫ ЖУРНАЛИСТА НА ПЕРЕДОВОЙ**

**Ключевые слова:** военная журналистика, освещение с передовой, фронт, война, безопасность, освободительная война, конфликт, этика, Арцах, пресса, армия.

Выбор темы научной статьи обусловлен проблемами, с которыми сталкиваются армянские СМИ. Для противостояния азербайджанской дезинформационной пропаганде армянские журналисты должны более профессиональным образом освещать ситуацию на границе для передачи объективной информации армянской и международной аудиториям.

В статье представлен путь основания и развития военной журналистики. Особое внимание уделено особенностям работы журналистов, передающих информацию с передовой во время войны. Рассмотрены международные принципы военной журналистики, которые должны применяться в армянских СМИ для грамотного освещения военной сферы.

Mkrtchyan Milena

### **FEATURES OF JOURNALISTIC WORK AT THE FRONTLINE**

**Key words:** military journalism, elucidation from the front line, military front, war, security, struggle for liberation, conflict, ethics, Artsakh, press, army.

The choice of the topic of the article is conditioned by the challenges threatening the Armenian mass media. In order to resist the Azerbaijani fraudulent propagation machine, Armenian journalists should cover the situation at the border more professionally so as to provide objective information for Armenian and international audience.

The article presents the origins and development of military journalism, as well as the peculiarities of the work of journalists covering the news from the frontline during wars. The international principles of military journalism are observed, which should be applied in the Armenian media in order to cover military affairs in a proper way.